# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

**2017թ. նոյեմբերի 28** **N 209 - Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով, <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, 1.16 կետի <<ա>> ենթակետով ՝ ***կարգադրում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի մի շարք դպրոցների ընդհանուր գործունեությունն ուսումնասիրելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:

2. Աշխատանքային խմբին՝ սույն թվականի նոյեմբերի 30-ից մինչև դեկտեմբերի 15-ը կատարել ուսումնասիրություններ և մինչև դեկտեմբերի 22-ը արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:

**Ա. ՍԻՄՈՆՅԱՆ**

Հավելված

ՀՀ Արագածոտնի մարզպետի 2017թ.

նոյեմբերի 28-ի N 209-Ա կարգադրության

**Կազմ**

**ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի մի շարք հանրակրթական ուսումնական հաստատությունների ընդհանուր գործունեությունն ուսումնասիրող աշխատանքային խմբի**

Աբգարյան Մամիկոն – ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ /խմբի ղեկավար/

Նալբանդյան Ռուզաննա - ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ

Խերանյան Արմինե – ՀՀ Արագածոտնի մարզպետի խորհրդական

Սիմոնյան Արմինե - ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ

Սարդարյան Ստալ - ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ

**ՀՀ Արագածոտնի մարզպետարանի**

**աշխատակազմի ղեկավար** **Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆ**